

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Ք

ԻՆՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԱՆԳԼԻԱՅԻ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

ՈՒԸՐՏԸՍՈՒԸՐԹ

Ռելիամ Ռերթալուորթի ծնած է Քոքր-մանսթի (Քլեմպրիլաշնո) մէջ 1770 ապրիլ 7ին, մեռած Ռայտէլ Մաննոթի (Ռէթմօր-լէնո) մէջ, 1850 ապրիլ 23ին: Ինք կը պատկանի, ինչպէս Քոլրիճ և Ռայտէր Սկոտ, անգղիական սոմանթիքներու երկրորդ սերնդիտան: Եւ կղզիացման մէջ ապրող մ'եղաւ, որով միայն ինքն իրեն կը պարտի իւր բանաստեղծական յրացումը, թէն իրեն սերտ բարեկամներ ունեցաւ Սանթէյ և Քոլրիճ: Ասոնցմէ աւելի իրաւունք ունի Լապալտ կոչուելու, վասն զի գրեթէ իւր բոլոր կեանքը անցուցած է անգլիական լծակներու մէջ. լծակներ՝ զորս ամենէն լաւ ինքն ըմբռնած է, և որոնց ամբողջ հմայքը կայ իւր բանաստեղծութեանց մէջ: Ոչ իւր Քէմպրիճի մէջ առած կրթութիւնը (1787-91), ոչ իւր ընթերցումներն՝ այնչափ ազդեցութիւն չունեցան իւր մտաց զարգացման վրայ, որչափ իւր հայրենեաց մէջ անցուցած մանկութեան և պատանեկութեան տարիներն, և յետոյ ճամբորդութիւններն, թէ՛ ի Չուիցերի, ուսկից հետը բերաւ իւր ստանաւորներու առաջին հասարկ՝ Եկարագրական Ռարոագծի (1793), և թէ՛ ի Քարդիա, ուր անցուց գրեթէ ասրի մը (1791-92) ի Փարիզ և ի Պլուա, բոլորովին յեղափոխութեամբ խանդավառաւ: Հոն սերտ բարեկամի մը ազդեցութիւնը կրնայ որ ջիւղ զօրավար եղաւ, Միքայէլ Պոփիւ: Անգրիա վերադառնալով Ռերթալուորթի, ժամանակ մ'ալ գեո

Հասարակագիտական մտաց. բայց Քոլրիճի և Սանթէյի նման, (որոնք այն ատեն իրեն զաղափարակից էին) չսփուսանց անգղիացի էր, որով չէր կրնար երկար ժամանակ համակրութիւն ունենալ շարժման մը՝ որ իրեն կը թուէր թէ անիրաւ աշխարհակալութիւններով կը տարածուի, և կը կործանէր սահմանադրութիւններ՝ զորս նա կը համարէր ժամանակէն նուիրագործուած և որոնք ընկերութեան մէջ կը ներկայացնեն զբնութիւն, որուն խնկարկուն էր:

Յեղափոխական աշխարհակալութիւններն և Արնալիքի թուականը զինք յուսահատուցուցին յեղափոխութեանէ. Եւսթոլէնի հետ ինքն ալ սկսաւ զայն ատեն և անոր զէմ կողեցաւ մինչեւ իւր կենաց վերջը. նոյն իսկ ամենաչափաւոր ձեւերուն զէմ ալ՝ զոր յեղափոխութիւնն ընդունած էր Անգլիոյ մէջ (ազատութիւն ուղղափառաց, Reform Bill): Այսպէս զաղգիտական յեղափոխութիւնը այն բեւեռն եղաւ՝ որ նախ ձգողութեամբ և ապա վանստեղծութեամբ ազդեց իւր քաղաքացիական կեանքին վրայ, զոր նախ մարդկութեան օգտին նուիրեց, ապա ազգասիրական ձկամանց և հուսկ ուրեմն հակազդեցութեան (reaction) գործածեց: Իւր կենաց բոլոր այս նշանաբան ինք պատմած է քերթուածի մը մէջ՝ որ թիրեւս իւր գլուխ գործոցն է, Եստի-երգանքը, (շտապորուած 1799 - 1815, և հրատարակուած 1850ին): Իւր կեանքին այս պատմութիւնը՝ նախաբան մ'է մեծ բաւ նաստեղծութեան մը՝ որուն առաջին մասը Մենակեցարթիւնը անկատար մտաց, բայց որուն երկրորդ մասը Արշաւանքը, (1814) կը բովանդակէ իւր խորագոյն մտածութիւնը՝ բնութեան և ընկերութեան և նոր խնկարկներու վրայ, զոր ընկերութիւնը պէտք է

լուծէ Անգլիոյ պէս կերպարանափոխ եղած
երկրի մը մէջ՝ արհեստագործական յեղա-
փոխութեամբ :

Նոյն տանն, 1896ին ի վեր յորում Քո-
լլորիճի աշխատակցութեամբ կը հրատարա-
կէր Քնարերգական զեղծները , Ուրբար-
սուբրթ կը հրատարակէր իսում մը քնար-
երգական տաղեր , ներշնչուած գեղջիական
կեանքէն , իւր հայրենեաց տանգութիւննե-
րէն , և զգզանկարներ ու հայրենասիրական
նուագներ՝ Կայսրութեան պատերազմներու
առթիւ : Այլ քերթուածներով կը շնորհ յի-
սագփախութիւն մը մայնիք բանաստեղծական
ոճին մէջ . կ'ազգեր ոչ միայն ջնջել նախորդ
գարու մէջ հնարած բոլոր բանաստեղծա-
կան զարդերը , այլ նաեւ արձակ և ոտանա-
ւոր բանաստեղծութեանց մէջ՝ բաց ի գաշ-
նակաւորութենէ՝ ուրիշ գանազանութիւն չլծու-
զուէ : Այս մասածութիւնը պարզած է նա իւր
բանաստեղծական հրատարակութեանց յա-
ռաջարանին մէջ , 1800էն սկսեալ : Արձա-
կի երեւոյթը՝ զխաւս արգելքն եղաւ իւր
բարոյական քարոզութեանց յաջողութեանը ,
որոնք սրբան անձկափախ՝ այնքան ալ տն-
կեցած էին : Հակառակ Քոլլորիճի սրամիտ և
յաճատ խանգալաւ մեկնութիւններուն՝ Գրա-
կան կենսագրութեան (1817) մէջ , կրնանք
բսել թէ Ռւրբարսուբրթի գրուածները քիչ
կարգացողներ և հասկցողներ ունեցան մին-
չեւ 1880 , յորում շարժում մը երեւան
եկաւ անգլիական քննադատութեան մէջ՝ Մ.
Անոլտի , Մայէրսի , Ճոն Մորլէյի հետ գա-
սելու համար զինքը՝ Ժժժ գարուն անգլիացի
բանաստեղծներուն առաջին կարգին մէջ :
Կարելի չէ ամբողջապէս այս գառառանը
վաւերացնել : Գնութեան զգացումը Ռւրբար-
սուբրթին քով իւր է , բայց սահմանափակ ,
վասն զի նա կապուած է գրեթէ միայն իւր
ծննդավայրին հետ :

Տիեզերաց նկատմամբ իւր ունեցած բաւա-
տեսութիւնը չափազանց սպիտութենէ յառաջ
կու գայ : Բայց անձուկ սահմանի մը մէջ
անգամ՝ իւր բանաստեղծութիւնը կը պահէ
միշտ յայտնի և համոզիչ անկեղծութեան
մ՝արժանիքը , որ չի նուազեր նոյն իսկ իւր
բացատրութեանց արձականման պարզութե-

նէն : Շատ տեղեր՝ իւր մեծ բանաստեղծու-
թեանց քանի մը հաստակոտորներուն մէջ ,
յուզման անկեղծութիւնը՝ ձեռի աշուտական
պարզութեան հետ միացած՝ մարդու վրայ
ճշմարիտ մեծութեան մը տպաւորութիւնը
կ'ընէ , ինչպէս իձ բնութեան որտեղն մին
բլլար :

Ամենէն յարգուած՝ Սանթիէյի մահուանէն
վերջ՝ Ռւրբարսուբրթ բանաստեղծի գափուե-
պակն ստացաւ . բայց կրնանք բսել իրեն
համար թէ ուուրջ ստեղծագործութենէ զպարե-
ցաւ 1815ին մտակր : Ընթր կ'այլըր միայ-
նակ իւր կնոջ և իւր Տարսթէա ըստը հետ , որոնց
չբնապղծող հոգնները , սր իրենց նամակ-
ներուն մէջ ալ կ'երեւին , մեծ ազգեցութիւն
ունեցան անտարակոյս իրենին վրայ : Իւր Ե-
կեղեցական եռագրերը (1820) , և իւր Ան-
գլիա և Սլոյսիա և ցամաքի վրայ բրած
ճամբորդութեանց ժամանակ ներշնչուած բա-
նաստեղծութիւնները՝ իւր փառքին վրայ բան
մը չարեւըցոյնին : Նախերգանքը՝ սր իւր բա-
նաստեղծութեան իսկութիւնը կը պարունա-
կէ և իւր բոլոր կենաց պատկերը կու տայ ,
մահուանէն վերջը լըստ տեսաւ , 1850ին :

Բ Ր Ա Խ Ե Ն Ի Գ

Ոտպելթ Բրաննից ծնած է Քլմպըրուէլի
մէջ 1812ին : Իւր թատերգական և փիլի-
սոփայական առաջին գործերը , Փերեսնը-
սըս (1835) , Սարաֆֆորդի ոգբերութիւնը
(1837) , Սորտեյոյի թատերգութիւնը
(1840) , Արատ մը զիեռեւնակի վրայ
(1843) , իձ և առաջնակարգ գեղեցկութիւն
ներսով օժտուած՝ բնու յաջողութիւն չունե-
ցան թատերգութիւն վրայ : Նոյն թուականը
կը կրեն նաեւ շատ մը բանաստեղծական
արատպութիւննի՝ սրանք փափկութեան վր-
այդ սքանչապողներու նեղ շրջանակէ մ'ան-
գին չունցան . Քնարերգական արտմներ , Ար-
քայն Վիկտոր և սերքայն Չարլըս , Քոյմ-
դոսի ծնկեկան տարեկարձը , Վիպերգական
արտմներ , Լոչրիա , և այլն :

Իւր ամուսնութիւնն ընդ Եղիտարէթ Պր-
բլթի , սր արդէն իսկ երեւելի էր (1846) ,
իւր երկասիրութիւններէն աւելի նպաստեց՝
հասարակաց ուշադրութիւնն իրեն քաշելու :

1848ին ըլսյ սեռաւ, Զակեպակներ և Կռեւեկներ վերնագրով քնարական և Թատերական բանաստեղծութեան համար մը, և 1849ին իւր երկարութեանց ատաղջին ամբողջական հրատարակութիւնը (2 հատ.) : Խորմեւ երեկոյ և Զատիկ (1850), Մարդիկ և կանայք (1855), վերջապէս ստիպիցին քննադատութիւնն ու հասարակաց կարծիքը՝ ժամանակակից ատաղջին բանաստեղծներուն մէջ իրեն ալ տեղ մը տալ : Անկէ վերջ իւր գործն անսահման եղաւ, և հա՛րաբար հեղազեհուէ մեծցաւ : Ուրիշ գործերէլ գատ գրած է նաեւ Քրիշի Գրքունի, Հոգոյն պատգամաւորութիւնը և Մատակները և մատնաբը երկոյն բանաստեղծութիւնը (1868, 4 հատ.) : Պէտտեղութի Արկածը (1871) : Ինչո՞ւն Հոնեկոյրը-Շուիկոյ, Բնկերորդեան Փրկիչը (1871) վերնագրով երգիծաբանութիւն մը՝ սրուն մէջ զխրաւ կարելի է ճանչնալ զՊ. Բիւմարը-Փաշիին՝ Տոնապաճառի մէջ (1872) : Կարմիր բաւրակէ գիշերուան գրիտանցի աշխարհը (1873) , առոր մէջ այժմուկութիւնն անեցոյ գործ մը ներկայացուած է՝ նորմանտական միջնալայրի մէջ : Սեզիաւ, Գորոյիցիքի երկու քերթակները (1878) : Հսպուական տրամներ (1879) : Ճորոյ Սերիա (1883), թուղով Երկրպիտի և Արիստոփանի նմանոյութեամբ գրած մի քանի երկերը : Պէտք է ատանձինն յիշել՝ Հերպէ Ռիէլ փոքրիկ քերթուածը, յորում 1871ի աղետալից պահուն նա կ'երպէ Գաղղիացի անձնօթ վերացազ մը, ծովկերեայ աննշան նաւազորդ մը, որ Hougueի պատերազմն վերջը իւր հայրենիքի քան և երկու նաւերն աղտոսեց Անգղիացաց ձեռքը ինչպիսի : Այս բանաստեղծութիւնը Գառնիի Մեկեղիկ թերթին մէջ հրատարակուեցաւ, և իրեն հարիւր անգլիական ոսիի շահել տուաւ (2, 500 ֆր.) , զոր նուիրեց Յանձնաժողովին՝ որ ստորագրութիւն բացած էր ի նպատակ Գաղղիայ :

Իրանինից կը մեղադրուի մտքով բլլալուն համար, ապրօրինակ և բնապրօս լեզու մը գործածելուն, երկայնարան, անհասարակ, նկարագրութեամբ և վերլուծմամբ ղեգծանոյ, չափազանց նուրբ բլլալուն համար, և վերջապէս իւր իմաստասիրական անվերջ պատ-

ճառարանութեանց համար, որ կարող են յնարեցողը սարսափեցնել : Սակայն իւր պահասութիւններով հանդերձ, չէ եղած ուրիշ կասկածներով մը որ աւելի խոր թափանցած բլլալ մարդկային սրան մէջ և իմաստութեամբ անոր ծաղրերբ բացած . և մինչեւ իսկ բոսց եղած է թէ Շէքսպիրին վերջ՝ հսգինբու մեծագոյն ստեղծող՝ Բրաւնինոյ է : Իւր մթութիւնը, զոր ոչ որ կը ժխտէ, ոչ թէ իւր բմբունաւնիբան անորոշութիւնէն յատուց կու գալ, այլ յնդհակասակն յատկութեանէն, որով նա կ'ընդգրկէ ամենէն մանր հանգամանքներն ալ, և մարդկային գործերու բոլոր շարիշները, և մտածութեան բաղադրեալ աշխատանքին հետեւեալ չափազանց ճշուրտութեան : Ինք կը պատկանի այն մեծ միտքեբուն խումբին, որոնց գործերը միշտ ըլսյ կը ճառագայթեն, և յաջորդ գործերու մէջ՝ յախճանական առարկայ պիտի բլլան մեկնութեանց և ուսմանց : Այս պատճառաւ իւր ողջ եղած ժամանակ ալ՝ զբովմար մարգուտ մը՝ որ շատ օգուտներ բրած է ազգային գրականութեան (Մ. Ֆ. Ֆ. Ֆրերիլալ), մասնաւոր ընկերութիւն մը կազմուեցաւ, Բրաւնիեզեան բնկերորդի, սրուն նպատակն է ուսումնասիրել և սարածել հեղինակին գործը :

Ա Ռ Ն Ո Ւ Պ

Անտղ (Մատթիւս) ծնած է Սթիմէտի քով Լէլէ՛՛նրի մէջ 1822 զեկտեմբեր 24ին : Իւր հայրը, Թովմաս Անտղ պատուելին, առաւածարանութեան ասուցիչ, քիչ վերջ Ուրիպայ գորոցին վարիչ, հնա կը բնակէր իւր աշակերտաց հետ : Իւր ստուաներն բրաւ Ռիշնըսդրի և Ոքսֆորդի Ռիւկայ և Պէլիօլ գորոցներուն մէջ : 1840ին Գառնաւոր Աշակերտ արադոնն ստացաւ, և 1843ին, անգլիերէն բանաստեղծութեան մը համար Ելիւտաիկէթի մըցանակն ընդունեցաւ, որուն նիւթն էր Քրոմաւէլ : 1844ին, համալսարանական քննութիւններն անցոց աւեհնարա թուանիչ ստանալով . յաջորդ առթին Օրիպլ զպրօցինն ասուցիչ կարգուեցաւ : Ըրաւ Լէնրասանն 1847ին զպէն իրր մասնական գրագիր իւր քով առաւ : 1855ին Ռալօմէն պատուարին աղջկան հետ ամուսնացաւ և հասարակաց

կրթութեան պաշտօնարարին զպրոցներուն վերատեսուչ անուանեցաւ 1857ին (Ռըսֆորդի մէջ իմաստասիրութեան ուսուցիչ եղաւ և իւր պաշտօնները պահեց մինչև 1867 : 1869ին Վարդապետ Էստիմարզի համարտրակին տնօրէն ընդունեցաւ , 1870ին մի և նոյն տնօրէնը շորհեց նաև իրեն Ռըսֆորդի Համալսարանը : Իտալիոյ թագաւորն ալ զինքը պատուեց շքանշանով Ապստոսրեան թագին Իտալիոյ :

Իւր բազմաթիւ գործերէն քանի մը զիտարներն յիշենք . Գրումուկ , պատկառած բանաստեղծութիւն , որ 1843ի յուլիս 28ին արտասանուեցաւ (Ռըսֆորդի մէջ . — Անգլիական և Իտալական հարցը (1859) . — Գաղղիոյ ժողովրդական կրթութիւնը , Հարևտայի և Զոսիցիոյ կրթական նաստատութեանց վրայ տեղեկութիւններ (1861) . — Հոմերոսը բարգմանելու վրայ , Օքսֆորդի մէջ տրուած երեք դասախօսութիւնք (1861) . — Դասախօսութիւնք կեղտակոն գրականութեան ուսումնասիրութեան վրայ (1867) . — Ս . Պօտու և Բողոքականութիւնը , ուսումնասիրութեամբ մը Մարքական աղանդոյն և Անգլիական եկեղեցւոյ վրայ (ա . սպ . 1870 , բ . 1870 , գ . 1875) . — Գրականութիւն և վարդապետութիւն , ուսումնասիրութիւն Ս . Գրոց յաւատոյն հասկացողութեան մասին (ա . սպ . 1873 , բ . 1873 , ... և . 1876 , ժողովրդ . սպ . 1883) . — Աստուած և Ս . Գիրք , տեսութիւն այն աւարկութեանց՝ որ կրած են ընդդէմ « Գրականութիւն և Վարդապետութիւն » գրութեան (1875) , ժողովրդական սպ . (1884) . — Վերջին ուսումնասիրութիւնք՝ Եկեղեցւոյ և Կրօնից վրայ (1877) . — Բանաստեղծութիւնք , նոր և կատարեալ սպ . 2 հտ . Լոնտրա , Օքսֆորդ (1877) . — Թուղթ , զրոցատրութիւնք , ձուրթ Իոյնական խրեղորոյն վրայ , յիտմոնտ Պլըքե հասարեալ և տպեալ յատարարեով հանկերթ (1881) , և այլն և այլն :

Պ . Մատթիու գրականութեան մէջ մատու նախ իրբն բանաստեղծ . Իւր առաջին գործը « Գրումուկ » , ինչպէս յիշեցինք , Համալսարանին պրակուեցաւ : Բանաստեղծութեանց առաջին երկու Հասարկերը անանուն լոյս

տեսան , և Հասարակութիւնը անոր մէջ խոսալսուեցաւ ըստ անոր մի նկատեց , բայց միտնգամայն չափազանց բնազրօս ճիգ մը ինքնատիպ երեւցաւ : Իւր Հրաշալի փոքր քերթութեամբ , Թափառալիկ հսկակատար , պարտաւելի կէտ մը միայն ունի , չափազանց թոյլ տաղաչափութեամբ գրուած է : Առաջակարգ գործեր կը նկատուին իւր Թրիարան և Իգեոյ բանաստեղծութիւնները . Գպրոցականը , Գեղան , Զոյրապ և Թուտում , յարմ մը սկզբունքին Համեմատ զգուշացած է « Թորեցուած մտածումներէ , թորեցուած բռնելու մէջ » : Իւր Տոյր Գորտաքըն Մերման քերթութեան մէջ՝ արեւմտեան ծովերու ոռմանութիւն բանաստեղծութիւնը գեղեցիկ կերպով արտայայտուած է : Իւր նուազ կարեւորութիւն ունեցող երկասիրութիւններն յիշատակենք Մարգարիտան : Գալլով իւր Մերտպե ողբերգութեան , ընդհանրապէս իւր միտ գործերն աւելի ստոր Համարուած է : Մինչև ցարկ այս քերթութեան Հեղինակը երկրորդ կարգի բանաստեղծներուն առաջինը նկատուած է : Ելիէ ինքնատիպ ըլլաւ ձկուած չըլլար , ելիէ անի կանտատօր և դեռ աւելի ներպաշտակաւոր շարք մ'ընտրած ըլլար , կրնար բանաստեղծներու առաջին կարգը դասուիլ : Ճիշտ ինքն ալ սոյն կարծիքն ունի , և ասոր Համար է որ ինք զբնապատուութիւնը նախադատ Համարած է : Ինքն իւր վրայ աւելի գէշ կը խօսի քան իւր թշնամիները , որոնք զինք աւելի մեծ բանաստեղծ կը Համարին քան քննադատ « Ճշմարիտ քննադատութիւնը , կ'ըսէ կրնայ տարբանալ և միանալ ստեղծող գործունէութեան Հետ . Հաճոյք զոր սրամիտ և իղծաւոր անձ մը միշտ պէտք է գերադասէ՝ աղքատիմաստ և մոլորանդն ու նիւթին անարժան ստեղծագործութիւններէ » : Իւր վրայ չի տեսնիր այն բոլոր յատկութիւնները որ անհրաժեշտ Հարկաւոր են մեծ բանաստեղծի մը : Իւր բնորոշման Համեմատ՝ ընկալատրութիւնք՝ բանաստեղծութեան Հատար բարձր է : Ըստ իւր կարծեալ , « Գինու գատուութիւնը իւր առաջիկային համապատասխանող գաղտնիչ Համար , պէտք է անշահասէր ջանք մ'ըլլայ սովեցնելու և առարածելու Համար լուսագոյն բաները՝ զոր աշ-

խարհս կ'ընէ և կը մտածէ » : Ուստի կարելի չէ բռնել թէ « քննադատ եղած է՝ անձին պաշտպանութեան համար » : Կոս կը նկատէ քննադատութիւնը՝ իբրև վսեմ առաքելութիւն մը՝ այնչափ որ եւելի օգտակար այս վայրկեանին՝ որչափ որ « քննադատութիւնը մտցուած և գուցէ վերջին փոփոխութեան է անդդիական մատենագրութեան մէջ » : Իւր ըրածը գործնականի մէջ կը համապատասխանէ՝ արդեօք այս բարձր գաղափարականին : Հակասակ այն մեծ յատկութիւններուն՝ զորս ցոյց տուած է, չափազանցութիւն պիտի ըլլայ Առնոլդը մեծ քննադատ համարել :

Մասնաւորապէս ինքնատուութեան ձկանունն համար կը պահարկուի, այնպիսի սկզբունքներ դնելով՝ որոնք ճիշդ չեն բուրովին, և անոր համար ալ է որ միշտ ճշտութեամբ չէ հպատակած իւր քննադատական օրինաց : Կը պարսաւտի դարձեալ, որ նոր դուրսններու անուն կու տայ, ինչպէս է « մեծ ոճ » ի դուրսները, առանց զանոնք բացատրելու կամ անոնց սահմանը սալու, բայց ամէն ոք կը իրօտութան իւր անկողմնակալութիւնը, մտածութեանց առատութիւնը և պատաստաններուն մեծաւ մտամբ ճիշտ ըլլալը :

Պ. Առնոլդ՝ իբրև պարոնցներու վերատեսուչ շատ զբաղած է Եւրոպայի կրթական հարցերով . ինք Անգղիոյ մէջ բնդուուած դուրսները կը քննադատէ՝ Գաղղիականն ու Գերմանականը գերազանցելով :

Կրօնական ինդիքներն Պ. Առնոլդի ամենազլխաւոր գաղափարներն եղան : Կրօնից վերայ ըրած ուսումնասիրութիւնը՝ հեազհետէ փոխել աւաւ իրեն նախկին կարծիքները . և քանի որ փորձառութեան և հանգամանքներէ յառաջ եկած իւր բարեփոխումը դեռ բոլորովին չէր վերջացած, պիտարին և յանդուգն բան մը պիտի ըլլայ բռնել թէ ինչ եղաւ իւր կրօնական հաւատամբը : Առատեօյ մասին քրիստոնէական ըմբռնումն ունի, սակայն ոչ մէկ եկեղեցւոյ չի պատկանիր, ինչպէս Միլտոն նոյն բանն իրմէն առաջ ըրած էր : Ու մանք կ'ըրեն թէ համայնաստուածեան է . իւր թշնամիները զինք ազատամիտ կ'անուանեն :

Եթէ ուղղափառ չէ, սակայն խորապէս կրօնաւոր է, և իրեն մէջ կրօնքի զգացումը՝ արհեստի զգացման հաւասար է . երկուքին մէջ ալ ճշմարտութիւն փնտռել ուղած է : Ամենամեծ ջանք ունեցած է զանոնք զարպացընելու և կրօնական ինդիքներու ուսումնասիրութիւնը մտցնելու հոն՝ ուր կրօնքն անձամբ էր :

Ինչ ինդիքներ ալ շօշափէ Պ. Առնոլդ, միշտ անոնց հետ խղճմանոնքով մը կը վարուի : Իւր պիտոգութիւնները նոր են և բազմաթիւ, և ինչ ալ կողուին իւր կարծիքները՝ միշտ ինքնաստիպ են և հետաքրքրական : Իւր գաստասաններուն մէջ կը ջանայ միշտ անկողմնակալ ըլլալ . գրական և կրօնական ըմբռնումներն միշտ բարձր են . և արուեստական զգացումը՝ որ իւր հիմն է՝ ոճին մէջ ալ կը փայլի : Եթէ չենք կրնար զինքը միշտ իբրև պատգամ ալ ընդունել, եթէ նա, ինչպէս ինքն իսկ կ'ընէ, Բարբարոսի և Փղշտացւոյ մտացոյրներն ունի, սակայն ապահովապէս կրնանք իրմով զբաղած ժամանակներս՝ անործելի և հրահանդիշ վայրկեաններ ունենալ :

Հ. Ա. ՅԱՎԱԵՓԵԱՆ



Լ Ե Ռ Ք Ա Ր Տ Ի

ՏԱՆԴԷԻ ԱՐՁԱՆԻՆ ՎՐԱՅ

ՈՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԷՐ Ի ՖԻԲԼԵՏԷ

ԽԱՅԱՅԻՍԻՆԵԸ ԹԷՎԷՆԻ ՍՈՒՂԷ
 Մեր ժողովուրդն իր թեւերուն տակ եերմակ,
 Պիտի շուռուին հին թրմութեան կապերէն
 Խաւաղական մտքերն՝ եթէ չըզտանայ
 Աղետաւոր երկիրս նախնի դարերու
 Հայրենասուէր օրինակաց . ըլլայ մօտ
 Սըրտիզ հիները պատուել, ո՞վ Խաւաղա .
 Ձի այսօր են թու գաւառները թափուր
 Նրմաններէն անոնց, ու մէկը չըկայ
 Որ ըլլայ թու յարգանքներուդ արժանի .
 Ետեւ դարձիր, հայրենիք իմ, ու նայէ
 Անմահներու գոհուիլն վերայ բազմահոյլ,
 Ու լաց, ու դուն քեզի՝ վերազ գայրացիք .
 Ձի ալ յիմար է ցուն առանց ցասոյթի .
 Գարձիր ետեւ ու ամբըցիր ու ցընցուէ,